# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-20-4/4-1

ք. Երևան /5.07.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Կարհագառ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **4694000 (չորս միլիոն վեց հարյուր իննսունչորս հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

**Սույն ընթացակարգի շրջանակներում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձի հետ պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարման փուլում առաջացող՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը (ակցիզային հարկ, բնապահպանական հարկ և այլն) հաշվանցվում և ՀՀ պետական բյուջե են վճարվում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձին վճարման ենթակա գումարից:**

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ.:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.
1-ին չափաբաժնի համար՝ 9000000 ՀՀ դրամ,
ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
1-ին չափաբաժնի համար՝ 18750285 ՀՀ դրամ,
Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորրդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորրդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈւ սպառազինության վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Կարիագառ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ. 29/25
«Արդշինբանկ» ԲԲԸ
Հ/Հ 2480100076100000
ՀՎՀՀ 01001431
տնօրեն

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-4/4-1 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Կատարողի կողմից պետք է տրվի երաշխիք փոխարինված պահեստամասերի համար 6 ամիս կամ 10000կմ:
2. Հիմնական նորոգում անցած ագրեգատների(շարժիչ,փոխանցումների տուփ, բաժանարար տուփ,կամրջակներ) շահագործման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս կամ 50000 կմ:
3. Ծառայությունը մատուցվում է ըստ հայտերի: Հայտի թույլտվությունը ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլայի ծառայության կողմից էլեկտրոնային տարբերակով տրվում է ծառայությունը մատուցողին:

Առանձին դեպքերում ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլայի ծառայության կողմից կարող է տրվել բանավոր թույլտվություն , որը պետք է հետագայում ձևակերպել գրավոր ձևով: Մինչև սպասարկելն ու նորոգելը ծառայությունը մատուցողի և 14746 զորամասի ներկայացուցչի կողմից կազմել արատավորման նախնական զննման ակտ կազմակերպության տնօրենի, վարորդի, ՀՀ ՊՆ 14746 զորամասի ներկայացուցչի և ՀՀ ՊՆ 14746 զորամասի հրամանատարի ստորագրությամբ և կնիքով, որից հետո երեք օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն:

Ծառայությունը պետք է մատուցվի (մեքենան նորոգվի)մեքենան նորոգման հանձնելու պահից 7 օր ներառյալ արատավորման աշխատանքները, որից հետո կազմել կատարողական ակտ վերոնշյալ անձանց ստորագրություններով, կնիքով և ներկայացնել ՀՀ ԶՈւ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն: Զորքերից նորոգման ենթակա տեխնիկայի փաստաթղթերը ստորագրվում է նաև զորքերի ներկայացուցչի կողմից:

4. Ծառայության մատուցման ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի պահեստամասերի, քսայուղերի, ներկերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է ծառայությունը մատուցողի կողմից:
5.Միներալ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 6000 կմ.
6.Սինթետիկ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 10000 կմ.
7.Կիսասինթետիկ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 8000 կմ.
8. Փոխարինված ագրեգատները և պահեստամասերը պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ 14746 զորամաս (ընդունումը և տեղափոխումը զորամասի ուժերով):

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | անվանումը | Չ/մ | քանակը | առավելագույն գումարը (ՀՀ դրամ) | մատուցումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ | |
| | | | | | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 1 | NISSAN PATROL 5.6 | դրամ | 1 | 4 694 000 | Ծառայությունների մատուցումը իրականացվելու է 2020թ. ընթացքում, ըստ ներկայացված հայտերի | |

***Մեծ ծավալի պատճառով ապրանքների և ծառայությունների միավորի գները ներկայացված են կից Հավելված 1-ով Excel տարբերակով:***

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒՂՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Կարիագար» ՍՊԸ
տնօրեն

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## Գնման ժամանակացույց և տեխնիկական բնութագիր

| | | |
|---|---|---|
| 2020 թվականի արտասահմանյան արտադրության ավտոմեքենաների սպասարկման ծառայությունների անվանացանկ | | |
| Գնման ժամանակացույց | | |
| հ/հ | Ծառայության անվանումը | Վերանորոգումների առավելագույն գումարը ՀՀ դրամ |
| 1 | NISSAN PATROL 5.6 | 4 694 000 |
| Ընդամենը | | 4 694 000 |
| Հ/հ | Ընթացիկ,միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները | Մեքենաներ |
| | | NISSAN PATROL 5.6 |
| | CPV | 50111130/39 |
| | | Մեկ միավորի գինը ՀՀ դրամ |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | անվճար |
| 2 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | անվճար |
| 3 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | անվճար |
| 4 | ABS համակարգի ստուգում | անվճար |
| 5 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | անվճար |
| 6 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | անվճար |
| Շարժիչ | | |
| 7 | Շարժիչի հանում և տեղադրում | 150000 |
| 8 | Շարժիչի քանդում ապատավորում և հավաքում | 300000 |
| 9 | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | 120000 |
| 10 | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով | 120000 |
| 11 | Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով | 50000 |
| 12 | Վառոցքի մոմի բնիկի նորոգում | 10000 |
| 13 | Շարժիչի փականների զսպանակների փոխարինում | 15000 |
| 14 | Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ | 90000 |
| 15 | Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ | 80000 |
| 16 | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | 180000 |
| 17 | Ծնկաձև լիսեռի հղկում | 50000 |
| 18 | Ծնկաձև լիսեռի փոխարինում | 150000 |
| 19 | Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ | 45000 |
| 20 | Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում | 50000 |
| 21 | Ծնկաձև լիսեռի ուղղում | 80000 |
| 22 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 30000 |
| 23 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 90000 |
| 24 | Շարժիչի բլոկի փոխարինում | 250000 |
| 25 | Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ | 70000 |
| 26 | Շարժիչի բլոկի հղկում | 65000 |
| 27 | Մխոցի փոխարինում 1 հատ | 45000 |
| 28 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում | 80000 |
| 29 | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում | 55000 |
| 30 | Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում | 40000 |
| 31 | Փոկանիվի փոխարինում | 25000 |
| 32 | Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում | 0 |
| 33 | Շարժիչի շղթայի փոխարինում | 150000 |
| 34 | Յուղի մղիչի շղթայի փոխարինում | 45000 |
| 35 | Շարժիչի վանոսների փոխարինում | 80000 |
| 36 | Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում) | 45000 |
| 37 | Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով | 45000 |
| 38 | Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում | 45000 |

| | | |
|---|---|---|
| 39 | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով | 45000 |
| 40 | Շարժիչի յուղի մղիչի փոխարինում | 55000 |
| 41 | Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում | 55000 |
| 42 | Շարժիչի յուղի մղիչի մաքրում | 50000 |
| 43 | Շարժիչի յուղի մղիչի կարգավորում | 45000 |
| 44 | Յուղի մղիչի թաթիկի փոխարինում | 35000 |
| 45 | Յուղի ծորակի փոխարինում | 15000 |
| 46 | Օդաքաշակ փողրակի փոխարինում | 20000 |
| 47 | Շարժիչի կոմպրեսորի փոխարինում (տուրբոմղիչ) | 0 |
| 48 | Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում | 0 |
| 49 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 50 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 45000 |
| 51 | Ուղղորդիչ վռանների փոխարինում | 15000 |
| 52 | Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում | 85000 |
| 53 | Շարժիչի կափույրի փոխարինում | 40000 |
| 54 | Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում | 40000 |
| 55 | Մխոցամատի փոխարինում | 20000 |
| 56 | Շարժիչի շարժաթևի փոխարինում | 25000 |
| 57 | Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ | 80000 |
| 58 | Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում | 10000 |
| 59 | Ատամնանիվի փոխարինում | 10000 |
| 60 | Ատամնանիվի փոկի փոխարինում | 0 |
| 61 | Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում | 0 |
| 62 | Սոլխարիկ փոխարինում | 10000 |
| 63 | Շարժիչի կայունի փոխարինում | 10000 |
| 64 | Շարժիչի հանդարտիչի փոխարինում | 15000 |
| 65 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում | 15000 |
| 66 | Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում | 15000 |
| 67 | Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով | 15000 |
| 68 | Շարժիչի յուղի արտանքաչափիչի (щуп) իրանի փոխարինում | 10000 |
| 69 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում | 20000 |
| 70 | Շարժիչի փոկի ձգիչի նորոգում | 15000 |
| 71 | Շարժիչի գամասեղի փոխարինում | 10000 |
| 72 | Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով | 10000 |
| 73 | Գլխիկի հեղույսի փոխարինում | 10000 |
| 74 | Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում | 5000 |
| 75 | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում | 80000 |
| 76 | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում | 50000 |
| | 2. [illegible] համակարգեր | |
| 77 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 2000 |
| 78 | Ավտոմեքենայի յուղում | 5000 |
| 79 | Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ | 15000 |
| 80 | Յուղի ռադիատորի փոխարինում | 15000 |
| 81 | Յուղի ռադիատորի նորոգում | 15000 |
| 82 | Յուղի զտիչի փականի փոխարինում | 10000 |
| 83 | Արտածման կոլեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 |
| 84 | Ներածման կոլեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 |
| 85 | Արտածման կոլեկտորի միջադիրի փոխարինում | 25000 |
| 86 | Ներածման կոլեկտորի միջադիրի փոխարինում | 25000 |
| 87 | Վառելիքի փողրակի փոխարինում | 15000 |
| 88 | Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ | 35000 |
| 89 | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | 15000 |
| 90 | Օդի զտիչի փոխարինում | 5000 |
| 91 | Կոնդիցիոների զտիչի փոխարինում | 5000 |
| 92 | Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5000 |
| 93 | Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում | 5000 |
| 94 | Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում | 2000 |
| 95 | Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում | 1000 |
| 96 | Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 40000 |
| 97 | Ինժեկտորի բոցամուղի փոխարինում | 30000 |
| 98 | Ինժեկտորի բոցամուղի մաքրում | 20000 |
| 99 | Բոցամուղի կոդավորում | 15000 |
| 100 | Ինժեկտորի բոցամուղի խտաբուկի փոխարինում | 10000 |
| 101 | Բենզամղիչի փոխարինում | 20000 |
| 102 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում | 15000 |
| 103 | Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 |
| 104 | Բռնկման կարգավորում | 12000 |
| 105 | CO կարգավորում | 5000 |
| 106 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |

| | | |
|---|---|---|
| 107 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 40000 |
| 108 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 |
| 109 | Վառելիքի բաքի մաքրում | 15000 |
| 110 | Արագարարի ոտնակի փոխարինում | 5000 |
| 111 | Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում | 3000 |
| 112 | Օդի ծախսի տվիչի փոխարինում | 10000 |
| 113 | Տրամբլյորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 |
| 114 | Տրամբլյորի վերանորոգում | 0 |
| 115 | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում | 10000 |
| 116 | Ջրի խողովակի, փողրակի փոխարինում | 5000 |
| 117 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում | 15000 |
| 118 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում | 15000 |
| 119 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | 15000 |
| 120 | Տվիչի փոխարինում | 5000 |
| | **Սառեցման և տաքացման համակարգ** | |
| 121 | Հովհարի փոխարինում | 15000 |
| 122 | Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 123 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 |
| 124 | Ռադիատորի շրջանակի փոխարինում | 15000 |
| 125 | Շերտափեղկի փոխարինում | 15000 |
| 126 | Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում | 10000 |
| 127 | Ռադիատորի կալունակի փոխարինում | 5000 |
| 128 | Ռադիատորի փողրակի փոխարինում | 5000 |
| 129 | Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 |
| 130 | Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 11000 |
| 131 | Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում | 15000 |
| 132 | Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում | 25000 |
| 133 | Կոնդիցիոների ռադիատորի նորոգում | 20000 |
| 134 | Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում | 60000 |
| 135 | Ընդարձակող բաքի փոխարինում | 15000 |
| 136 | Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում | 5000 |
| 137 | Ջրի ծորակի փոխարինում | 3000 |
| 138 | Հովացման հիդրոկցորդի փոխարինում | 3000 |
| 139 | Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում | 5000 |
| 140 | Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 3000 |
| 141 | Հովհարի բևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5000 |
| 142 | Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված | 90000 |
| 143 | Վառարանի ռադիատորի նորոգում | 50000 |
| 144 | Վառարանի շարժիչի փոխարինում | 90000 |
| 145 | Թերմոստատի փոխարինում | 20000 |
| 146 | Ջրի մղիչի փոխարինում միջադիրով | 25000 |
| 147 | Ջրի մղիչի միջադիրի փոխարինում | 1000 |
| 148 | Գեներատորի փոկի փոխարինում | 8000 |
| 149 | Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում | 5000 |
| 150 | Ջրի ռադիատորի վերանորոգում | 80000 |
| 151 | Թերմոստատի միջադիրի փոխարինում | 1000 |
| 152 | Սառեցման համակարգի օդահանում | 5000 |
| 153 | Խլարարի գոֆրայի փոխարինում | 15000 |
| 154 | Կատալիզատորի հանում | 25000 |
| 155 | Խլարարարի կատալիզատորի տվիչի փոխարինում | 10000 |
| 156 | Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 157 | Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում | 15000 |
| 158 | Խլարարի անուրի (хамут) փոխարինում | 5000 |
| 159 | Խլարարի ներդիրի փոխարինում | 8000 |
| 160 | Խլարարի կախոցի փոխարինում | 6000 |
| 161 | Կալունակի փոխարինում | 3000 |
| 162 | Ռեզոնատորի փոխարինում | 16000 |
| 163 | Հովացման հեղուկի փոխարինում | 4000 |
| | **Շարժիչ** | |
| 1 | Շարժիչի բլոկ | 1585000 |
| 2 | Շարժիչի գլխիկ | 989450 |
| 3 | Բարձիկ | 125,000 |
| 4 | Հարվածամեղմիչ հագողի | 64,000 |
| 5 | Շարժիչի գլխիկի միջադիր | 45,000 |
| 6 | Շարժիչի միջադիրների կոմպլեկտ | 181,000 |
| 7 | Շարժիչի փականի դուրս մղող | 23,500 |
| 8 | Շարժիչի փականի ներս մղող | 23,050 |
| 9 | Շարժիչի փականի խցաբուկ | 3,250 |
| 10 | Փականի զսպանակ | 3,600 |
| 11 | Ծնկաձև լիսեռ | 650,230 |
| 12 | Ծնկաձև լիսեռի խցաբուկ առջևի | 21,600 |
| 13 | Ծնկաձև լիսեռի խցաբուկ հետևի | 45,000 |
| 14 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ | 56,000 |

| | | |
|---|---|---|
| 15 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ | |
| 16 | Հենակային տափօղակ | 58,050 |
| 17 | Մխոց | 15,355 |
| 18 | Մխոցային օղակներ 1 կ-տ | 123,500 |
| 19 | Մխոցային մատ | 165,000 |
| 20 | Ատամնանիվ | 26,000 |
| 21 | Ատամնավոր փոկ | 69,000 |
| 22 | Շարժիչի կոմպրեսոր (տուրբոմղիչ) | 0 |
| 23 | Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչ | 0 |
| 24 | Շարժիչի կափույր | 0 |
| 25 | Շարժիչի կափույրի կափարիչ | 87,980 |
| 26 | Շարժիչի շղթա | 39,000 |
| 27 | Շղթա | 65,000 |
| 28 | Շարժիչի պաշտպանիչ | 35,000 |
| 29 | Զգան | 75,115 |
| 30 | Հիդրոձգան | 78,000 |
| 31 | Հրիչ | 78,000 |
| 32 | Շարժիչի հիդրոհրիչ | 83,000 |
| 33 | Շարժիչի կալուն | 35,000 |
| 34 | Շարժիչի հանգստարարիչ | 39,000 |
| 35 | Շարժիչի հոլովակ | 42,350 |
| 36 | Շարժիչի հոլովակի առանցքակալ | 46,900 |
| 37 | Շարժիչի առջևի կափարիչ | 59,345 |
| 38 | Շարժիչի վերևի կափարիչ | 10,790 |
| 39 | Շարժիչի վերևի կափարիչի միջադիր | 100,015 |
| 40 | Թափանիվ | 100,845 |
| 41 | Շարժաթև | 14,525 |
| 42 | Ատամնանիվ բաշխիչ լիսեռի | 185,600 |
| 43 | Ատամնանիվ ծնկաձև լիսեռի | 76,360 |
| 44 | Փոկանիվ ծնկաձև լիսեռի | 63,495 |
| 45 | Փոկանիվ | 63,495 |
| 46 | Շղթա յուղի մղիչի | 84,660 |
| 47 | Սուխարիկ փականի | 57,270 |
| 48 | Գլխիկի բոլտ | 36,935 |
| 49 | Ծնկաձև լիսեռի բոլտ | 3,735 |
| 50 | Պարկուճ (гильза) 1 կ/տ | 6,225 |
| 51 | Կարտեր | 9,960 |
| 52 | Շարժիչի ատամնավոր փոկ | 54,780 |
| 53 | Պատյան ատամնավոր փոկի | 61,835 |
| 54 | Փական յուղի տարայի | 0 |
| 55 | Խուփ ընդարձակման բակի | 0 |
| 56 | Խուփ շարժիչի | 12,450 |
| 57 | Թաքիկ յուղի մղիչի | 10,375 |
| 58 | Բարձիկ փ/տուփի | 9,960 |
| 59 | Միջադիր յուղի մղիչի | 77,190 |
| 60 | Շարժիչի յուղի արանքաչափիչ | 50,215 |
| 61 | Շարժիչի յուղի արանքաչափիչի հրան | 10,790 |
| 62 | Կափույրի միջադիր | 9,960 |
| 63 | Կարտերի միջադիր | 17,845 |
| 64 | Վանոս | 19,090 |
| 65 | Շարժիչի բաշխիչ լիսեռ | 5,810 |
| 66 | Բ/լիսեռի կափարիչ | 125,745 |
| 67 | Բ/ լիսեռի խցաքուկ | 145,250 |
| 68 | Շարժիչի բ/լիսեռի ականոց | 41,915 |
| 69 | Շարժիչի բ/լիսեռի եռիքակ | 10,790 |
| 70 | Շարժիչի զամասեղ | 6,225 |
| 71 | Գլխիկի միջադիր | 5,810 |
| | | 2,075 |
| | | 46,895 |
| | 2. [illegible] | |
| 72 | Յուղ շարժիչի CEARLUBE կամ համարժեք միներալ 15W40, *1լ* | 2,500 |
| 73 | Յուղ շարժիչի CEARLUBE կամ համարժեք 10W40, *1լ* | 3,500 |
| 74 | Յուղ շարժիչի CEARLUBE կամ համարժեք 5W40, *1լ* | 6,500 |
| 75 | Յուղ շարժիչի CEARLUBE կամ համարժեք սինթետիկ 5W30, 1լ | 6,500 |
| 76 | Յուղ շարժիչի CEARLUBE կամ համարժեք կիսասինթետիկ 5W40,1լ | 65,000 |
| 77 | Յուղ շարժիչի CEARLUBE կամ համարժեք դիզելային 10W40, 1լ | 3,500 |
| 78 | Յուղ շարժիչի CEARLUBE կամ համարժեք դիզելային 15W40, 1լ | 2,500 |
| 79 | Յուղման համակարգի լվացման հեղուկ *1լ* | 3,000 |
| 80 | Ինժեկտորի մաքրման հեղուկ | 3,735 |
| 81 | Կոնդիցիոների զտիչ | 31,540 |
| 82 | Յուղի զտիչ | 12,000 |
| 83 | Փական յուղի զտիչի | 12,000 |
| 84 | Յուղի մղիչ | 152,000 |
| 85 | Յուղի պոմպի շարժաքեր | 21,580 |
| 86 | Յուղի ռադիատոր | 153,550 |

| | | |
|---|---|---|
| 87 | Ցուրի փողրակ | |
| 88 | Ցուրի ծորակ | 27,805 |
| 89 | Վառոցքի կոճ | 11,620 |
| 90 | Արտածման կալեկտոր աջ | 85,000 |
| 91 | Արտածման կալեկտոր ձախ | 152,000 |
| 92 | Ներածման կալեկտոր աջ | 152,000 |
| 93 | Ներածման կալեկտոր ձախ | 152,000 |
| 94 | Արտածման կալեկտորի աջ միջադիր | 152,000 |
| 95 | Արտածման կալեկտորի ձախ միջադիր | 25,000 |
| 96 | Ներածման կալեկտորի աջ միջադիր | 25,000 |
| 97 | Ներածման կալեկտորի ձախ միջադիր | 22,000 |
| 98 | Վառոցքի մոմ | 22,000 |
| 99 | Վառոցքի մոմի խտարար | 10,375 |
| 100 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանց | 12,450 |
| 101 | Բենզոմղիչ | 11,205 |
| 102 | Բենզոբաք | 170,150 |
| 103 | Բենզոբաքի կափարիչ | 134,875 |
| 104 | Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի | 11,620 |
| 105 | Ինժեկտորի բոցամուղ դիզելային շարժիչի | 125,000 |
| 106 | Բոցամուղի խտաբուկ | 0 |
| 107 | Խառնարակ | 0 |
| 108 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 0 |
| 109 | Վառելանյութի զտիչ | 170,150 |
| 110 | Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման | 25,315 |
| 111 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչ | 11,620 |
| 112 | Վառելանյութի փողրակ | 1,660 |
| 113 | Վառելանյութի խողովակ միջին | 16,600 |
| 114 | Վառելանյութի խողովակ | 18,675 |
| 115 | Արագարարի ճոպան | 18,675 |
| 116 | Արագարարի ոտնակ | 29,880 |
| 117 | Արագարարի տվիչ | 31,955 |
| 118 | Օդի զտիչ | 34,445 |
| 119 | Օդի ծախսաչափիչ | 31,125 |
| 120 | Օդաբաշխի փողրակ | 112,050 |
| 121 | Օդի ծախսաչափիչի փողրակ | 35,275 |
| 122 | Օդի զտիչի փողրակ | 41,500 |
| 123 | Պատյան օդի զտիչի | 17,845 |
| 124 | Ջերմաստիճանային տվիչ | 42,745 |
| 125 | Յուղի տվիչ | 22,410 |
| 126 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 13,280 |
| 127 | Օդի ծախսի տվիչ | 86,320 |
| 128 | Արագաչափի տվիչ | 87,150 |
| 129 | Հովհարի տվիչ | 41,500 |
| 130 | Ջրի խողովակ երկար | 23,240 |
| 131 | Ջրի խողովակ կարճ | 31,125 |
| 132 | Ջրի տվիչ | 24,900 |
| 133 | Բենզոբաքի տվիչ | 24,900 |
| 134 | Մարման ընթացքի կարգավորիչ | 53,950 |
| 135 | Ղեկավարման համակարգիչ | 62,250 |
| 136 | Պարապ ընթացքի տվիչ | 203,350 |
| 137 | Դրոսելային փականի տվիչ | 70,135 |
| 138 | Թթվածնի տվիչ | 49,800 |
| 139 | Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկ | 84,660 |
| | [illegible] | 850,000 |
| 140 | Հովհարի փոկ | |
| 141 | Հովհար | 38,180 |
| 142 | Հովհարի շարժիչ աջ | 85,000 |
| 143 | Հովհարի շարժիչ ձախ | 61,005 |
| 144 | Հովհարի թևանիվ աջ | 61,005 |
| 145 | Հովհարի թևանիվ ձախ | 42,745 |
| 146 | Ռադիատոր | 42,745 |
| 147 | Ռադիատորի կայունակ աջ | 290,500 |
| 148 | Ռադիատորի կայունակ ձախ | 15,000 |
| 149 | Ընդարձակող բաքի փական | 15,000 |
| 150 | Ընդարձակող բաքի փողրակ | 12,450 |
| 151 | Ընդարձակող բաք | 17,845 |
| 152 | Ռադիատորի փողրակ ներքևի | 75,000 |
| 153 | Ռադիատորի փողրակ վերևի | 23,655 |
| 154 | Թերմոստատ | 29,050 |
| 155 | Ջրի մղիչ | 45,000 |
| 156 | Ջրի մղիչի միջադիր | 103,750 |
| 157 | Ջրի պոմպի խտաբուկ | 3,320 |
| 158 | Ջրի պոմպի առանցքակալ | 5,000 |
| 159 | Ջրի պոմպի թևակ | 5,000 |
| 160 | Սառեցման հեղուկ *1 լիտր* | 5,000 |
| 161 | Չսառչող հեղուկ ապակիների համար 1լ | 5,000 |
| 162 | Ձգիչ հոլովակի | 3,735 |
| 163 | Փոկ մեծ | 6,225 |
| | | 33,615 |

| | | |
|---|---|---|
| 164 | Փոկ կոնդիցիոների | 18,260 |
| 165 | Կոնդիցիոների կոմպրեսոր | 425,000 |
| 166 | Կոնդիցիոների ռադիատորի փողրակ | 55,610 |
| 167 | Առանցքակալ կոնդիցիոների | 36,935 |
| 168 | Հովացման համակարգի ռետինե խողովակ | 20,750 |
| 169 | Կոնդիցիոների ռադիատոր | 350,000 |
| 170 | Կոնդիցիոների յուղ | 11,620 |
| 171 | Կոնդիցիոների կայունակ | 8,715 |
| 172 | Ծորակ | 4,150 |
| 173 | Սառնարան | 161,850 |
| 174 | Պատյան հովհարի | 38,595 |
| 175 | Փոկանիվ գեներատորի փոկի | 36,935 |
| 176 | Պատյան թերմոստատի | 23,240 |
| 177 | Միջադիր թերմոստատի | 2,075 |
| 178 | Խլարարի ներդիր | 12,450 |
| 179 | Խլարարի կախոց | 9,545 |
| 180 | Խլարարի գոֆրայ | 39,425 |
| 181 | Խլարարի գոֆրայի տվիչ | 85,075 |
| 182 | Խլարարի խողովակ | 42,745 |
| 183 | Հովացման հեղուկ | 2,905 |
| 184 | Կրոնշտեյն | 6,225 |
| 185 | Խլարարի անուր (Խամուտ) | 581 |
| 186 | Խլարար | 247,340 |
| 187 | Ռեզոնատոր | 200,860 |
| 188 | Շարժիչ վառարանի | 80,095 |
| 189 | Վառարանի ռադիատոր | 113,295 |
| | | **18,750,285** |

**Ծանոթություն՝**

Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2020թ. ընթացքում համաձայն հայտերի, բայց ոչ ուշ քան՝ 10.12.2020թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՑՈՒԼՁՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Կարհազատ ՍՊԸ
տնօրեն

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-4/4-1 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ., ընդ որում՝ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/հ | անվանումը | CPV կոդը | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | NISSAN PATROL 5.6 | 50111130/39 | 2676000 | 2676000 | 2676000 | 4694000 | 4694000 | 4694000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Կարիագառ» ՍՊԸ
տնօրեն

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-20-4/4-1 պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    »    «    » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 3.1**
**N ԳՀԾՁԲ-20-4/4-1 պայմանագրի**

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը / Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն